սիս–արեւմուտք 7—8 կիլոմետրի չափ եւ միախառնւում են Ճորոխին–Կատուգարայի

որ այնտեղ վառուած մոմից, խնկից եւ կրակարաններից բարձրացած ծուխը որքան էլ փչացրել, ծածկել է նկարները, բայց մի աման տաքջրով եւ մի ջնջոցով կարելի է ուզածդ տեղը մաքրել եւ հիանալ։ Երկինքի նման, տաճարի կամարին լազուր գոյն է տուած. եւ 1000 տարի յետոյ էլ գոյնը չի կորցրել, անչափ բարբարոսական քերքրոցներից յետոյ։ Իշխանքի ապարանքի դահլիճը՝ 1873 թ. առաստաղի մի անկիւնը բլած-ծակուած էր եւ միւսի մէջ գարման ու լազուր էր լցրած, այնպէս որ իշխանականների ժողովարանը գարմաննոց էր դարձել. բայց տաճարը թէեւ անխնամ, բայց գմբէթն ամբողջապէս կար ու մնում է մինչեւ օրս։ Այս տաճարի նկարները ցոյց են տալիս, թէ նկարչութիւնն ինչ բարձր աստիճանի է հասած եղել. եւ Տակայշվիլին այս գործը Բանայի տաճարի հետ հրատարակեց։ Սակայն գոյների վրայ յատուկ ուշադրութիւն չեն դարձրել։ Այստեղ գոյների մէջ գերիշխողը լազուրն է, որը խորքն է ամբողջ գմբէթի եւ կամարների։ Երեւում է որ լազուրը գործածուել է ՃԱ-նում անխնայաբար. նոյնպէս եւ իշխանքի տաճարում, որը հազար տարուց յետոյ պահպանել է իր նախնական գոյնը։ Ինչպէս որ Լագաշում, Միտանայում եւ Սիպպարում պատրաստում էին պղնձից լազուր ու Եգիպտոս վաճառում, այնպէս էլ Սպերի. Կիսկիմի հանքերից դուրս բերուած պղնձից լազուր են պատրաստել եւ այդ ապրանքը վաճառքի են հանել դարեդար։ Երեւում է, որ մինչեւ Իշխանի եւ եօթը հրաշալիքների կերտուած դարերում լազուր պատրաստելու արհեստը անմահ մնացած է եղել ՃԱ-ւում, որ այդ շրջանից մինչեւ արաբացիների իշխանութեան շրջանը Ե-ԺԱ-րդ դարը բանացրել են լազուրը։

Այստեղ պարտաւորուած եմ յիշելու նոյնպէս, որ 1908—1909 թ. երբ Նիկողայոս Մառը պեղում էր Անիի միջնաբերդի ապարանքը, գտաւ առաստաղի եւ որմերի միջի անկիւնազարդ փայտի կտոր, որը ոչ միայն լազուրով էր ներկուած, այլ տեղ-տեղ ոսկեզօծուած։ Շատ ցաւեցան, որ փթել էր այդ փայտը. բայց կտորները պահեցին եւ սրբութեան մէջ անցկացրին։ Եթէ Գագիկի չինել